

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹՎՊԻ-ի գիտական խորհրդի 2016թ. հունիսի 27-ի

նիստի /արձ. 13/

1. 2015-2016 ուս. տարվա ավարտական քննաշրջանի արդյունքների վերաբերյալ ԱԱՀ նախագահների հաշվետվությունն ընդունել ի գիտություն,
- 1.1 հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին և թողարկող ամբիոնների վարիչներին 2016-2017 ուս. տարում ավարտական աշխատանքների գործընթացը կազմակերպելիս նկատի առնել ԱԱՀ նախագահների ղիտողություններն ու առաջարկները,
  - 1.1.1 պահպանել ավարտական աշխատանքների համար սահմանված ձևաչափը,
  - 1.1.2 ավարտական աշխատանքների թեմաները հաստատելիս նկատի առնել թեմաների բազմազանության ապահովումը,
  - 1.1.3 մասնաճյուղերում մասնագիտական թեզերի ղեկավարներ նշանակել մայր բուհի դասախոսներին,
- 1.2 հանձնարարել Թատրոնի ֆակուլտետին ներկայացնել նախագիծ ավարտական աշխատանքների ստուգաշրջանի ընթացքում գործող հանձնաժողովների աշխատակարգի վերաբերյալ,
- 1.3 Երևանի հեռուստառադիոակադեմիայի 2009թ. շրջանավարտ Էդվարդ Բորիսի Մինասյանի կողմից որպես ավարտական աշխատանք ներկայացված «Խաղաղության հանգրվան» ֆիլմի իսկությունը պարզելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով`
  1. Գագիկ Ստեփանյան- պրոֆեսոր
  2. Վրեժ Պետրոսյան- պրոֆեսոր
  3. Սիրանուշ Գալստյան - դոցենտ
- 1.3.1 հանձնաժողովի եզրակացությունը կցել արձանագրությանը,
- 1.3.2 հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում ԱԱՀ որոշումը թողնել անփոփոխ և Էդվարդ Բորիսի Մինասյանին շնորհել պետական նմուշի դիպլոմ,
- 1.3.3 հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում ԱԱՀ որոշումը չեղյալ համարել:

2. Մագիստրատուրայի կրթական ծրագրով ինստիտուտում գործող բոլոր մասնագիտական ուսումնական պլաններում «Աղբյուրագիտություն» դասընթացը փոխարինել «Գիտահետազոտական աշխատանք» դասընթացով:
3. Գիտական խորհրդի նիստին անդամների անհրաժեշտ թվաքանակի բացակայության պատճառով օրակարգի 3-րդ հարցը տեղափոխել ԳԽ հաջորդ նիստի քննարկմանը:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան